«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(ճշգրտված տարբերակ)

Հաստատման ամսաթիվ՝ **«03» հուլիս 2026թ.**

Ծանուցում. *Սույն զեկույցը հանդիսանում է 03.06.2026թ. հաստատված կառավարման մարմնի տարեկան զեկույցի ճշգրտված տարբերակը: Ճշգրտումը վերաբերում է կառավարման մարմինների կազմի ճշգրիտ ներկայացմանը (բաժին 2)՝ Ընկերության կանոնադրությանը և տնօրենների խորհրդի կազմավորման որոշումներին համապատասխան, ինչպես նաև գործունեության անընդհատության բաժնի թարմացմանը (բաժին 7): Զեկույցը հաստատվել է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից:*

1. Ընդհանուր տեղեկություններ

Սույն կառավարման մարմնի տարեկան զեկույցը կազմվել է «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ի կողմից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 18-րդ գլխի 41-րդ կետի պահանջների:

«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ն հանդիսանում է պարտատոմսերի հաշվետու թողարկող և իրականացնում է գործունեություն վերականգնվող էներգետիկայի, արևային համակարգերի նախագծման, կառուցման և ինժեներական ծառայությունների ոլորտներում:

2. Կառավարման մարմինը և պատասխանատու անձինք

Ընկերության կանոնադրությամբ սահմանված կառավարման մարմիններն են՝

- Մասնակիցների ընդհանուր ժողովը՝ որպես կառավարման բարձրագույն մարմին (Ընկերության միակ մասնակիցը ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանն է, ում պատկանում է կանոնադրական կապիտալի 100%-ը).
- Տնօրենների խորհուրդը՝ ռազմավարական կառավարման և գործադիր մարմնի նկատմամբ վերահսկողության մարմին.
- Գործադիր մարմինը (տնօրեն)՝ ընթացիկ գործունեության ղեկավարման համար:

Տնօրենների խորհուրդը կազմավորվել է Ընկերության միակ մասնակցի 11.10.2024թ. թիվ 11/10/24 որոշմամբ (կանոնադրության մեջ ներառվել է կառավարման համապատասխան բաժինը), իսկ խորհրդի անդամները նշանակվել են 28.10.2024թ. թիվ 28/10/24 որոշմամբ: Խորհուրդը բաղկացած է 5 անդամից՝

- Հայկ Շեկյան — Խորհրդի նախագահ,
- Տիգրան Գասպարյան — Խորհրդի անդամ,
- Սոֆիա Սարգսյան — Խորհրդի անդամ,

- Վախթանգ Աբրահամյան — Խորհրդի անդամ,
- Հայկ Գրիգորյան — Խորհրդի անդամ:

Ընկերության գործադիր մարմնի (տնօրենի) պաշտոնը զբաղեցնում է Հայկ Շեկյանը, ով պատասխանատու է Ընկերության ընդհանուր օպերացիոն և ռազմավարական կառավարման համար:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու անձը Ընկերության ֆինանսական տնօրենն է՝ Սերգեյ Մարությանը: Ֆինանսական հաշվետվությունները հաստատվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմքը

2025 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (IFRS) համապատասխան: Հաշվետու տարվա ընթացքում հաշվապահական քաղաքականություններում կամ կիրառված գնահատումներում էական փոփոխություններ չեն կատարվել:

4. Ֆինանսական արդյունքների և բիզնեսի զարգացման վերլուծություն

2025 թվականը Ընկերության համար եղել է կառուցվածքային փոփոխությունների և շուկայական վերադասավորումների տարի: Ստորև ներկայացված են հիմնական համախմբված ֆինանսական ցուցանիշները՝

- Ընդհանուր ակտիվներ՝ 2,508 մլն դրամ,
- Ընդհանուր պարտավորություններ՝ 3,203 մլն դրամ,
- Սեփական կապիտալ՝ (695) մլն դրամ,
- Համախմբված հասույթ՝ 3,793 մլն դրամ,
- Տարվա վնաս՝ (515.7) մլն դրամ,
- Դրամական միջոցներ տարեվերջին՝ 118.8 մլն դրամ:

Հասույթի նվազումը պայմանավորված է ոլորտային՝ համակարգային գործոնով՝ 2025թ. երկրորդ կիսամյակում մանրածախ արևային էներգիայի սուբսիդավորվող հատվածի կտրուկ կրճատմամբ, որն ազդել է շուկայի բոլոր մասնակիցների վրա և կապված չէ Ընկերության շուկայական դիրքի կորստի հետ, ինչպես նաև խմբի կառուցվածքային փոփոխությամբ:

Ընկերությունն ընդունում է, որ տարեվերջին սեփական կապիտալը բացասական է, ինչը գործարկում է ՀՀ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի՝ զուտ ակտիվների և կանոնադրական կապիտալի հարաբերակցության կարգավորման պահանջները: Կապիտալի վերականգնմանն ուղղված միջոցառումները ներկայացված են բաժին 7-ում:

5. Դրամական հոսքեր և ֆինանսական վիճակ

2025 թվականի ընթացքում դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը կազմել է 48.3 մլն դրամ, իսկ տարեվերջյան մնացորդը՝ 118.8 մլն դրամ: Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքը դրական է: Ղեկավարությունը շարունակել է իրացվելիության և պարտավորությունների կառավարման մշտադիտարկումը:

6. Գործառնական միջավայր, հիմնական ռիսկեր և անորոշություններ

2025 թվականը վերականգնվող էներգետիկայի ոլորտի համար եղել է էական կարգավորման փոփոխությունների տարի: Ընկերության գործունեության վրա ազդեցություն ունեցող հիմնական ռիսկերն են՝

- Շուկայական և ոլորտային ռիսկ — պետական աջակցության մեխանիզմների փոփոխությունը և սուբսիդավորվող հատվածի կրճատումը.
- Ֆինանսական և վարկային ծանրաբեռնվածության ռիսկ — բարձր լծակը և դրա սպասարկման ծախսերը. դրամական հոսքերի փոփոխությունները կարող են ազդել ֆինանսական կայունության վրա.
- Իրացվելիության ռիսկ — շուկայի փոփոխությունների և պարտքային բեռի պայմաններում իրացվելիության ապահովումը.
- Կարգավորիչ և պետական քաղաքականության ռիսկ — ոլորտի կարգավորման հետագա փոփոխությունները.
- Գործառնական ռիսկեր — մատակարարման շղթաների, գործընկերների և նախագծերի իրականացման հետ կապված ռիսկերը:

7. Գործունեության անընդհատության գնահատում

Ղեկավարությունը մշակել և իրականացնում է գործողությունների ծրագիր՝ ուղղված շահութաբերության և դրամական հոսքերի կայունության վերականգնմանը: Հիմնական ուղղություններն են՝

- (ա) պարտքի կարգավորում — 2026թ. մայիսի 12-ին դատարանը հաստատել է Մասրիկ-1 նախագծի գլխավոր կապալառու «Զայնա Արմենիա Էնժիներինգ» ՍՊԸ-ի հետ հաշտության համաձայնագիրը, որի շրջանակներում Ընկերությունը արդեն ստացել է 99.5 մլն դրամ, մնացած 49,5 մլն դրամը ստանալու է մինչև 2026թ. օգոստոսի վերջ.
- (բ) պարտքի վերակառուցում — բանկային վարկերի վերակառուցումն ընթացքի մեջ է. «Արդշինբանկ»-ի հետ համապատասխան պարտավորությունը վերակառուցվել է 04.06.2026թ., իսկ «Արմսվիսբանկ»-ի հետ բանակցությունները շարունակվում են և ակնկալվում է ավարտին հասցնել մինչև 2026թ. օգոստոսի վերջ.
- (գ) ծախսերի օպտիմալացում — աշխատավարձի ֆոնդի կրճատում շուրջ 60%-ով, ինչպես նաև վաճառքի և վարչական ծախսերի նվազեցում.

- (դ) կապիտալատար ծրագրերի կասեցում — 80 ՄՎտ հողմակայանի ծրագրի դադարեցում, «Շտիգեն Վենչուրս» ՓԲԸ-ի գործունեության ժամանակավոր դադարեցում, Վրաստանի գործառնությունների ծավալի վերանայում.
- (ե) սեփական կապիտալի վերականգնում — միակ մասնակիցը քննարկում է Ընկերության լրացուցիչ կապիտալիզացիայի տարբերակը:

Հաշվի առնելով այս միջոցառումները՝ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ և իրատեսական հնարավորություն՝ տեսանելի ապագայում շարունակելու գործունեությունը: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունները կազմվել են գործունեության անընդհատության հիմունքով:

8. Կարևոր դեպքեր

2025 թվականին և մինչև 03.07.2026թ. տեղի ունեցած կարևոր իրադարձություններից են՝

- «ԷներԷքս» ՓԲԸ բաժնետոմսերի վաճառքը և դեկոնսոլիդացիան,
- Պարտավորությունների մարման նպատակով իրացվել են ցածր եկամտաբեր ակտիվները: Մասնավորապես՝ վաճառվել են Ընկերությանը պատկանող արևային կայաններում փայաբաժինները,
- պարտատոմսերի թողարկման/տեղաբաշխման գործընթացը,
- ֆինանսավորման ներգրավման և բիզնեսի վերակազմավորման միջոցառումները,
- «Մասրիկ-1» նախագծի հաշտության համաձայնագրի հաստատումը (12.05.2026թ.),
- 2025–2026թթ. Վրաստանի Ռուսթավի քաղաքում 23.9 ՄՎտ արևային կայանի ճարտարագիտական և շինարարական աշխատանքների իրականացումը՝ ենթակապալառուի կարգավիճակով,
- 2025թ. օգոստոս ամսից տեղի է ունեցել Ընկերության ֆինանսական տնօրենի փոփոխություն: Ընկերության ներկայիս ֆինանսական տնօրենն է հանդիսանում Սերգեյ Մարությանը,
- Ընկերության գործադիր կազմի անդամ, ՄՌԿ-ի և կորպորատիվ մշակույթի ղեկավար Լեյլա Առաքելյանը 2025թ. սեպտեմբերի 1-ից այլևս չի աշխատում «Շտիգեն» ՍՊԸ-ում:

9. Կապակցված կողմերի հետ հարաբերություններ

2025 թվականի ընթացքում իրականացվել են կապակցված կողմերի հետ գործարքներ բնականոն բիզնես գործունեության շրջանակներում: Ղեկավար անձանց վարձատրությունը կազմել է 45.9 մլն դրամ:

10. Հետագա զարգացման հնարավոր նկարագիրը

Ընկերության ռազմավարությունը կենտրոնացած է արևային էներգետիկայի, էներգիայի կուտակման համակարգերի, ջերմային պոմպերի, ինժեներական ծառայությունների, հողմային էներգետիկայի ոլորտներում գործունեության զարգացմանը, ինչպես նաև

ֆինանսական կայունության վերականգնման ուղղությամբ: Ղեկավարությունն ակնկալում է ոլորտի աճի վերսկսում՝ պետական աջակցության նոր ծրագրերի և ներդրումային հետաքրքրության պայմաններում:

11. Պատասխանատու անձանց հայտարարություն

Սույն կառավարման մարմնի տարեկան զեկույցը պատրաստվել է ղեկավարության լավագույն գիտելիքների և համոզմունքների հիման վրա: Ղեկավարության գնահատմամբ՝ սույն զեկույցը և 2025 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններն ու դրանց վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը միասին արժանահավատ են ապահովում «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ և Խմբի գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի, հիմնական ռիսկերի և զարգացման հետանկարների հավասարակշռված և համակողմանի ներկայացումը:

Հայկ Շեկյան
Տնօրեն

Սերգեյ Մարության
Ֆինանսական տնօրեն